**Անշարժ գույքի վարձակալության գնման պայմանագիր**
**N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/12 գնման պայմանգրի**

ք. Երևան

**13. 11. 2017 թ.**

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ.Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015թ. 956-Ա որոշման հիման վրա այսուհետև՝<Վարձակալ>, մի կողմից, և <Նարեկ> ԳՀՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ս.Դավթյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև <Վարձատու>, մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

***1. Պայմանագրի առարկան***

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանն է հանձնում սեփականության իրավունքով իրեն պատկանող ՀՀ Երևան քաղաքի Սասունցի Դավթի 87ա հասցեում գտնվող 200 քմ տարածքը (այսուհետ՝ Գույք): Սույն պայմանագրով նախատեսված վարձակալության /այսուհետև՝ Վարձակալություն/ ժամկետ է սահմանվում 2018թ. դեկտեմբերի 30-ը ներառյալ:

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված տարածքը սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին՝ /սեփականության վկայական թիվ 23012012-01-0045/:

1.3. Վարձակալության ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքույմ՝ պայմանով, որ Վարձակալի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

***2. Կողմերի իրավունքները և պարտականությունները***

**2.1. Վարձատուն իրավունք ունի՝**

ա) Ստանալ վարձավճար սույն պայմանագրով սահմանված չափով և պայմաններով

բ) վարձակալից պահանջել Տարածքը օգտագործել սույն պայմանգրով սահմանված նպատակով.

գ) Վարձակալի ներկայացուցչի հետ միասին մուտք գործել Վարձակալված տարածք՝ տարածքի օգտագործման պայմանները հսկելու նպատակով.

**2.2 Վարձատուն պարտավորվում է՝**

ա) Վարձակալին երեք օր առաջ տեղեկացնել վարձակալված տարածքի մասի այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականությանն անցնելու, ինչպես շենքի կամ նրա մի մասի իրավունքի նկատմամբ վեճ լինելու մասին

բ) Չխոչնդոտել Վարձակալին վարձակալված տարածքում սույն պայմանագրով սահմանված գործունեություն իրականացնելիս, ինչպես նաև չմիջամտել նրա գործունեությանը.

գ) վարձակալական պայմանգրի ժամկետը լրանալուց 10 օրվա ընթացքում համապատասխան հանձնման-ընդունման արձանագրությունով ընդունել վարձակալված տարածքը այն վիճակով, ինչ վիճակով հանձնել են Վարձակալին, հանած դրանց բնական մաշվածությունը.

դ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային վճարները /հարկերը/ կատարում է վարձատուն

**2.3. Վարձակալը իրավունք ունի՝**

ա) Տարածքը օգտագործել իր նշանակությանը համապատասխան,

բ) Վարձակալության պայմանգրի ժամկետի ավարտման կամ պայմանագրի վաղաժամկետ լուծելու դեպքում հանել /վերցնել/ իր կողմից տարածքի վրա կատարած բաժանելի բարելավումները և Վարձատուին վերադարցնել տարածքը այն վիճակով ինչ վիճակով ընդունել է հանած բնական մաշվածությունը, եթե կողմերի միջև չկա այլ պայմանավորվածություն

գ) Տարածքում կատարել ընթացիկ վերանորոգման աշխատանքներ պահպանելով շինարարական նորմերի պահանջները

**2.4. Վարձակալը պարտավորվում է՝**

ա) ժամանակին վճարել վարձավճարը սույն պայմանգրի 3-րդ կետով սահմանված կարգով և պայամններով.

բ) պայմանգրի ժամկետը լրանալու օրվանից սկսած 10 օրվա ընթացքում համապատասխան ակտով հանձնել տարածքը այն վիճակով, ինչ վիճակով ընդունել է, հանած դրանց բնական մաշվածությունը.

գ) Վարձակալած տարածքը տրամադրել ենթավարձակալության միայն Վարձատուի գրավոր համաձայնությամբ

***3. Պայմանագրի գինը***

3.1. Պայմանագրի գինը կազմում է 900000/ինը հարյուր հազար/ ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Վարձակալի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում հարկերը և այլ պարտադիր վճարները: Ամսեկան վարձավճարի չափը կազմում է 75000 /յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամ:

3.2. Սույն պայմանագրի 3.1. կետում նշված վարձավճարը Վարձակալը վճարում է Վարձատուին անկանխիկ՝ դրամական միջոցները Վարձատուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում:

3.3. Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

3.4. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում սահմանվում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 %-ի չափով, տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

***4.Վարձատուն երաշխավորում է***, որ վարձակալության տրամադրման պահին սույն պայմանագրով վարձակալության տրված տարածքը գրավ չի դրված, չի դրված որևէ այլ ձեռնարկության հիմնադիր ֆոնդում, այն ամբողջությամբ, կամ նրա մասի տնօրինման, տիրապետման և օգտագործման նկատմամբ դատական կամ այլ սահմանափակումներ չեն սահմանված /հաստատում է ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ Էրեբունի տարածքային ստորաբաժանման կողմից 28.03.2014 թ. տրված թիվ ՄՏ-28032014-01-0068 միասնական տեղեկանքը/

***5. ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 610 և 611 հոդվածներին համապատասխան*** սույն պայմանագիրը ենթակա է պետական գրանցման և նոտարական վավերացման: Այդ կապակցությամբ առաջացած ծախսերը կատարում է Վարձակալը:

***6. Այլ պայմաններ***

6.1. Սույն պայմանգիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պարտականությունների լրիվ կատարումը: Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են 2018թ. հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:

6.2. Սույն Պայմանգիրը կազմված է երեք էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ՝ Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1, N2, N3, N4 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

6.3. Սույն պայմանգրով Վարձակալի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

6.4. Կողմերի վավերապայմաններն են.

| **Վարձակալ** | **Վարձատու** |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | <Նարեկ> ԳՀՓԲԸ |
| Ք.Երևան, Արգիշտի փ. 1 | Ք.Երևան, Գորվետկա 4 |
| Կենտրոնական գանձապետարան | <Արդշինբանկ> ՓԲԸ, Էրեբունի մ/ճ |
| ՀՀ 900022600549 | ՀՀ 247230001338/0999 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 00403641 |
| Գ.Չթրյան ..... | Ս.Դավթյան ..... |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

***Հավելված N 1***
*N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/12 գնման պայմանագրի*
*Կնքված 13 նոյեմբերի 2017թ.*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Ծառայության անվանումը | տեխնիկական բնութագիրը | Հ/Մ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 70311200 | Էրեբունի վարչական շրջանի սոցիալական աջակցության տարածքային բաժնի տարածքի վարձակալություն | Տարածքի մակերեսը 200քմ: Բաշխված 8 սենյակի: Վերանորոգված, հարմարեցված գրասենյակային աշխատանքների կազմակերպման համար: | քմ | **900000** | 200 | Ս. Դավիթ 87Ա | Ձեռք բերման նախընտրելի ժամկետ է սահմանվում Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը |

Վարձակալ

Երևանի քաղաքապետարան
Ք.Երևան, Արգիշտի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900022600549
ՀՎՀՀ 02593108

Գ.Չթրյան .....
(ստորագրություն)
Կ.Տ

Վարձատու

<Նարեկ> ԳՀՓԲԸ
Ք.Երևան, Գորվետկա 4
<Արդշինբանկ> ՓԲԸ, Էրեբունի մ/ճ
ՀՀ 247230001338/0999
ՀՎՀՀ 00403641

Ս.Դավթյան.....
(ստորագրություն)
Կ.Տ

***Հավելված 2***
*N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/12 գնման պայմանագրի*
*Կնքված 13 նոյեմբերի 2017թ.*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| _____ | _____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«  » «  » 20  թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Գնորդն՝ ի դեմս _____ և *Վաճառողը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.*
Պայմանագրի շրջանակներում Վաճառողը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

***Հավելված 3***
*N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/12 գնման պայմանագրի*
*Կնքված 13 նոյեմբերի 2017թ.*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց

ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

***Հավելված 4***
*N ԵՔ-ՄԱԾՁԲ-18/12 գնման պայմանագրի*
*Կնքված 13 նոյեմբերի 2017թ.*

**ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(հայտի ապահովում)**

ք. Երևան 13 նոյեմբերի 2017թ.

<Նարեկ> ԳՀՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս.Դավթյանի (ՆՔ 003777042), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

**1. Համաձայնության առարկան**

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարան-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **ԵՔ-ՄԱԾՁԲ-18/12** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես մասնակցության հայտի ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները («Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մաս) չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և Ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Բանկի կողմից մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է գնման ընթացակարգին մասնակցելու հայտը Ընկերության կողմից ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

<Նարեկ> ԳՀՓԲԸ
Հասցե՝ Ք.Երևան, Գորվետկա 4
<Արդշինբանկ> ՓԲԸ, Էրեբունի մ/ճ
ՀՀ 247230001338/0999
ՀՎՀՀ 00403641
Տնօրեն՝
Ս.Դավթյան

(ստորագրություն)

Կ.Տ

| | |
|---|---|
| 1. | **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N**<br>(Հայտի ապահովում) |
| 2. | *Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.* |
| 3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ <Նարեկ> ԳՀՓԲԸ | |
| 4. Վճարողի բանկը՝<Արդշինբանկ> ՓԲԸ | |
| 5. Վճարողի հաշվի համարը՝ 247230001338/0999 | |
| 6. Վճարողի ՀՎՀՀ՝ 00403641 | |
| 7. Վճարողի ՀԾՀ՝ | |
| 8. Շահառու՝ Երևանի քաղաքապետարան | |
| 9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108 | |
| 10.Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան | |
| 11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900015211429 | |
| 12.Գումարը թվերով և բառերով՝ 90000 /իններսուն հազար/ | |
| 13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD | |
| 14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի կատարման ապահովում | |
| 15.Պայմանագրի ծածկագիրը՝ ԵՔ-ՄԱԾՁԲ-18/12 | |
| 16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը էջ | 17. կից՝ --- |
| 19.ա. Շահառուի ստորագրությունները<br>/_____/<br>/_____/<br>19.բ.<br>Կ.S. | 18.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/_____/<br>/_____/<br>18.բ.<br>Կ.S. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից<br>20.ա.<br>/_____/<br>/ստորագրություն/<br>20.բ.<br>Կ.S.<br>"___" ___<br>20___ թ. | Կատարված է վճարողի բանկի կողմից<br>21.ա.<br>/_____/<br>/ստորագրություն/<br>21.բ.<br>Կ.S.<br>22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___<br>20___թ. |